## ՔԱՂՈՒԱԾՆԵՐ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳԻՐՆԵՐԻՑ

Հոկտեմբերի 6-ին թ. 606. Սինոդը լսելով Եամախու Կոնսիստորիայի 1908 թ. վիճակային և օտարին արդեանց մտից և ելից մատեանների և ապացուցաթղթերի քննութեան գործը՝ որոշեց. կանոնաւոր գտնելով Եամախու 1908 թ. վիճակային և օտարին գումարների հաշիւները՝ այս գործը Սինոդում կարճել և ժամանակին տալ դիւան պահելու։

Հոկտեմբերի 6-ին թ. 607. Սինոդը լսելով Վաղարշապատ գիւղի 1909 թ. բամբակի բահրան ժողովելու մասին № 63 գործը՝ որոշեց. որովհետև 1909 թ. բամբակի բահրան արդէն ժողովուած է և հաշիւը փակուած, ուստի այս գործը աւարտուած համարել։

Հոկտեմբերի 6-ին թ. 608. Սինոդը լսելով Եղուարդ գիւղի հողաբաժանութեան գործը՝ որոշեց. նախ՝ յանձնել երկրաչափ Ի. Մ. Մարուաշուիլուն Եղուարդի հողաբաժանութեան գործը վերջացնելը Կոմարովսկու կազմած մակարդակի համաձայն, տալով նրան այդ աշխատանքի համար երեք հարիւր ռուբլի իբրև վարձատրութիւն, սենեակ Եղուարդում և մի ձի դաշտում շրջելու համար. երկրորդ՝ պատուիրել Տ. Խաչիկ ծ. վարդապետին գնալ երկրաչափ Մարուաշուիլու հետ Եղուարդ, հսկել հողաբաժանութեան գործին և ստանալ գիւղացիներից, տարւոյս ապրիլի 9-ի թ. 247 օրագրական վճռի համաձայն, հողաբաժանութեան ծախքի կէսը՝ այն ցուցակի համեմատ, որ կստանայ Սինոդից. երրորդ՝ խնդրել Էջմիածնի գաւառապետին և Աշտարակի Հաշտարար միջնորդին աջակցութիւն ցոյց տալ Տ. Խաչիկ ծ. վարդապետին և երկրաչափ Մարուաշուիլուն։

Հոկտեմբերի 11-ին թ. 614. Սինոդը որոշեց. հանել Մ. Աթոռի ներքին գանձարանից արժէթղթերի այն կտրոնները, որոնց արժէքը պէտք է սաացուի առ 1-ն հոկ-

տեմբերի և յանձնել Մ. Աթոռի գանձապահին՝ պատուիրելով ստանալ Երևանի Պետական բանկից նրանց տոկոսները և ներկայացնել Սինոդիս։

Հոկտեմբերի 21-ին թ. 615. Սինոդը որոշեց. հանել Մ. Աթոռի ներքին գանձարանից Ռուսական երկաթուղիների երաշխաւորեալ պարտաթղթերը, որոնց կտրոնները արդէն վերջացած են, 29 հատ՝ իւրաքանչիւրի արժէքը 650 ռուբ. և ութսուն և մի հատ՝ իւրաքանչիւրի արժէքը 115 ռուբ. այդ բոլորը յանձնել Մ. Աթոռի գանձապահին՝ պատուիրելով ուղարկել Ս. Պետերբուրգի դրամատունը փոխելու նորերի հետ։

Հոկտեմբերի 11-ին թ. 612. Սինոդը լսեց Վրաստանի Հայոց Թեմական առաջնորդի տարւոյս փետրուարի 23-ի № 351 յայտարարութիւնը, որի հետ ներկայացրել էր Սինոդին ի տնօրէնութիւն Տփխիսի ա. կարգի վաճառական Տիգրան և Իսահակ Կարապետեան Վարդանեանց եղբայրների յայտարարութիւնը, որի մէջ ասուած է, թէ նրանք ներկայացնում են առաջնորդին իրենց հանգուցեալ հօր Կարապետ Կոնեան Վարդանեանցի կտակի պատճէնը և 2 դրամատոմս Տփխիսի առևտրական դրամատան, որոնցից մէկը 20,000 ռուբ. № 40555 Վեհափառ Կաթուղիկոսի անունով, իսկ միւսը 10,000 ռուբ. № 40556, առաջնորդի անունով, այդ փողից 20,000 ռուբլին պէտք է յանձնել Անդղիական դրամատունը Ամենայն Հայոց Կաթուղիկոսի անունով ի մշտական շահեցողութիւն, իսկ %% ստանալու են՝ 10 մաս Մուշի Ս. Կարապետ վանքի միաբանները, 50 մաս այդ վանքի դպրոցը, և 40 մաս որբերը և աղքատները վանահօր հայեցողութեամբ։ Իսկ 10,000 ռուբլով պէտք է գնել մի անշարժ կալուած Տփխիսի Նորաշէնի Ս. Աստուածածին եկեղեցու անունով, այդ կալուածքի եկամտից 60% պէտք է ստանայ Մարիամեան օր. դպրոցը, 30% գործադրուի կալուածի նորոգութեան վերայ, իսկ եթէ աւելանայ՝ պէտք է գործադրուի դպրոցի չքաւոր աշակերտուհիների օգտին, իսկ 10% ստանալու է

նոյն եկեղեցու միաբանութիւնը, պարտաւորուելով տարեկան երկու անգամ պատարագ մատուցանել և հոգեհանգիստ կատարել իրանց հանգ. հօր համար։ Սինոդը որոշեց. պատուիրել Վրաստանի Հայոց կոնսիստորիային կարգադրել, որ Տփխիսի Նորաշէնի Ս. Աստուածածին եկեղեցին ընդունի ի սեպհականութիւն նուիրաբերած կալուածը, որ գտնուում է Տփխիսի Ը. քաղաքամասում, և որի համար արդէն ստացուած է Բարձրագոյն հաճութիւն։

Հոկտեմբերի 13-ին թ. 629. Սինոդը որոշեց. պատուիրել Երևանի կոնսիստորիային տալ Լ. Ցարութիւնեանցին 1000 ռուբլի վիճակային արդիւնքից, ի հաշիւ Հառիճոյ վանքի, իբրև փոխարինութիւն։

Հոկտեմբերի 15-ին թ. 633. Սինոդը որոշեց. Բջնու վարձակալ Աղաջան Թաղիանոսեանի հետ կապած պայմանը համարել ոչնչացած, զիջանելով Թաղիանոսեանի խնդրին, և պատուիրել վանական կառավարութեան նոր աճուրդ նշանակել Բջնին վարձով տալու համար։

Հոկտեմբերի 15-ին թ. 639. Սինոդը լսելով Շամախու կոնսիստորիայի տարեոյս ապրիլի 4-ի № 406 յայտարարութիւնը Աննա Անդրէասեան Գրինվալդի նուիրաբերած 400 քառ. սաժ. հողի մասին, իբրև եկեղեցու շինութեան տեղ, որոշեց. պատուիրել Շամախու կոնսիստորիային ընդունել յիշեալ 400 քառ. սաժ. հողը, որ գտնուում է Շամախում, համաձայն ներքին գործոց նախարարութեան թոյլտուութեան։

Հոկտեմբերի 15-ին թ. 640. Սինոդը լսելով Վեհափառ Կաթուղիկոսի հոկտ. 6-ի № 2174 կոնդակը Մ. Աթոռի միաբան Տաճատ վարդապետի խնդրի մասին, որոշեց. ազատ համարել Տաճատ վարդապետ Մելքոնեանին Մ. Աթոռի միաբանութիւնից և իսպառ արձակել նրան հոգևոր կոչումից համաձայն իւր խնդրի։

Հոկտեմբերի 20-ին թ. 443. Սինոդը որոշեց. ի փոփոխումն Սինոդիս 1898 թ. մայիսի 28-ի շրջաբերական

հրամանի պատուիրել բոլոր կոնսիստորիաներին բացատրել վիճակների քահանաներին նախ՝ որ արգելուում է այլադաւան քրիստոնեաների պսակ կատարելը Հայաստանեայց եկեղեցու ծիսով, որովհետև X հատ. 1 մ. 65 յօդուածի իմաստի համաձայն հայ քահանայի ձեռքով կատարուած այլադաւանների պսակը կարող է անվաւեր ճանաչուել, երկրորդ՝ այլադաւան քրիստոնեաների մկրտութեան վերաբերութեամբ առաջնորդուիլ Սինոդիս 1906 թ. սեպտ. 25-ի № 1927—1931 և 1909 թ. նոյեմբերի 4-ի № 2585—2590 շրջաբերականներով, և երրորդ՝ այլադաւան քրիստոնեաներին իրանց խնդրի համաձայն հայ քահանաները կարող են խոստովանեցնել, հաղորդել և ննջեցեալներին թաղել, եթէ նրանց դաւանութեան սրբազնագործ պաշտօնեայ չլինի յիշեալ հոգևոր պէտքերը կատարելու վայրում։

Հոկտեմբերի 20-ին թ. 647. Սինոդը որոշեց. ի նկատառնելով, որ ինչպէս երևում է Աստրախանի կոնսիստորիայի 1908 և 1909 թ. թ. մատեանների քննութիւնից, թեմի վիճակային արդիւնքից յաւելեալ գումար է մնում՝ բոլոր ծախքերը ծածկելուց յետոյ, այլ և աչքի առաջ ունենալով Մ. Աթոռի նիւթական վիճակը՝ պատուիրել Աստրախանի կոնսիստորիային սոյն 1910 թ. վիճակային արդիւնքից փոխադրել Սինոդիս անունով 600 ռուբլի իբրև նպաստ Մ. Աթոռի Ճեմարանի պահպանութեան համար և նոյն նպաստը շարունակել ուղարկել ամեն տարի։

Հոկտեմբերի 20-ին թ. 648 Սինոդը լսելով Մ. Աթոռի Տպարանի 1909 թ. ել և մտից հաշիւների քննութեան գործը՝ որոշեց. Տպարանի Վարչութեան 1909 թ. հաշիւները կանոնաւոր գտնելով այս գործը կարճել։